քով, հրապարակային նշանակութիւնից զուրկ էին այն անհատական պարագաները, որոնք նրա վերոյիշեալ օրագիրների գլխաւոր բովանդակութիւնն են կազմում. ապա՝ նաեւ նրա համար, որ նրանց հրատարակութեամբ ես թերեւս երկուսին էլ վնասած լինէի: Այնպէս որ այդ օրագիրները մինչեւ այժմ էլ իմ ձեռքում են մնացել, որովհետեւ յարմար առիթ չներկայացաւ՝ կրկին Երեւան ուղարկելու...

«Աբովեանը իր վերջին նամակում գրում էր ինձ, որ վնռել է ռուս-պետական ծառայութիւնը թողնել, եւ որ մտադիր է քաշուել Հայաստանի ներսերը՝ իր հայրերի օրինակով հողագործութեան նուիրուելու եւ դրանով ապրելու, որովհետեւ իր անչնչան եկամուտները չեն բաւարարում քաղաքի պահանջներին, եւ որ, առհասարակ, իր վիճակի բարելաւմանը շարունակել սպասելը իրեն էլ աւելի մեծ թշուառութեան դիրքը պիտի նեռի:

«Անձնական յաւալի փորձառութիւններն էին այդ տաղանդաւոր ու ջանասէր մարդուն նման որոշման յանգել տուել: Նրա կեանքի պատմութիւնը աւելի քան նշանակալից է, այնպէս որ ես չեմ կարող չհաղորդել նրա մի քանի գծերը:

«Աբովեանը ծնուել է այս դարու սկզբներին՝ Երեւանի մօտ գտնուող մի գիւղում, որի անունը ես մոռացել եմ, չքաւոր ծնողներից5) յարկի տակ: Եւ որովհետեւ դեռ մանուկ հասակից նա ուսման մեծ սէր է ունենում, ուստի եւ շատ վաղ բերւում է Էջմիածնի վանքը, այնտեղ հոգեւոր կոչման համար նախապատրաստուելու նպատակով:

«Արարատի ստորոտին գտնուող այդ հինաւուրց ու հռչակաւոր, Պատրիարքանիստ վայրում այն ժամանակ իշխում էր Եփրեմ Կաթողիկոսը: Սա մի սառն, գոռոզ մարդ էր, որ խիստ կարգ ու կանոնի տակ էր դրել վանականների եւ սաների արտաքին կեանքը, պահպանելով ձեւականութիւնները եւ ատում էր ամէն մի ճշմարիտ մշակոյթ եւ գիտութիւն6): Իր սեփական գիտութիւնը նա միշտ ծածուկ էր պահում, իսկ նրա եպիսկոպոսների ու վարդապետների թւում ամենէն գիտուն մարդու հռչակ ունէին նրանք, որոնք հազիւ քիչ-շատ հասկանալ կարող էին Ս. Գրոց գրաբար թարգմանութիւնը:

«Այն ժամանակները (Էջմիածնի) վանքը տակաւին չէր կրում եւրոպական մշակոյթի դիմակը, որ նա այնուհետեւ, կայսերական տան մի քանի անդամների այցելութիւնից յետոյ, առել է իր դէմքին: Աբովեան պատմում էր ինձ եւ Ռ-ին (Ռոզէն), մեզ Էջմիածին ուղեկցած միջոցին, թէ մի տեսակ սառը քրտինք է դալիս վրան, երբ նա ամէն անգամ ոտքը հինաւուրց պարիսպներից ներս է դնում,— այնչափ սահմռկեցուցիչ են եղած իր այն տպաւորութիւնները, որ նա ստացել է այնտեղ՝ տակաւին մանուկ հասակից, եւ որոնք այնուհետեւ չեն անհետանում իր յիշողութիւնից: Նրա՝ Աբովեանի անյաջող փորձերը զանազան անգամներ, փախչելու վանքից, առիթ են ծառայել, որ նրա հանդէպ աւելի եւս խիստ վերաբերմունք ցոյց տրուի, քան առաջ:

«Եւ այսպէս, նա մեծանում է արցունք թափելով, աշխատելով ու պահեցողութեամբ մի այնպիսի միջավայրում, որ բթացնում է ամէն ազնիւ ինչ, որ զարդացնում է անբնական հակումներ: Այդտեղից Աբովեան հետը դուրս չէ տանում ոեւէ օգուտ, բացի գրաբար լեզուի փոքր ինչ ծանօթութիւնից: Նա դպրի (Diakon) աստիճանին էր հասած, երբ Դորպատի հռչակաւոր պրոֆեսոր Պարրոտը 1829 թուականին Հայաստան է գալիս, Արարատ սարը բարձրանալու առաջադրութեամբ: Պատահականութիւնը նրան եւ Աբովեանին քով-քովի է բերում, Աբովեան այնպիսի լաւ տպաւորութիւն է թողնում Պարրոտի վրայ, որ սա չէ կանգնում եւ ոչ մի դժուարութեան առաջ՝ նրան որպէս իր ուղեկից հետը առնելու, երբ նա արդէն իսկ յաղթահարել էր այն միւս դժուարութիւնները, որ իր պարքն էր սեպում առաջացնել բարձր հոգեւորականութիւնը առհա-

5) Աբովեանի ծնողները, յայտնի է, բնաւ չքաւոր չեն եղել, այլ գիւղի (Քանաքեռի) բարեկեցիկ — բաղդատաբար հարկաւ — անդամներ: Նրանց տոհմին է վերապահուած եղել նաեւ Ֆ-ի ժառանգական գիւղապետութիւնը:

6) Աբովեանի՝ իր, ինչպէս նաեւ Հաքբստհաուզէնի տեղեկութիւնները Եփրեմ Կաթողիկոսի մասին ա՛յլ են: